Հավելված
ՀՀ կառավարության 2025 թվականի
ապրիլի 17-ի N 447 - Ն որոշման

Ց Ա Ն Կ

ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՐԱՏՆԵՐԻ ԿԱՄ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Երկու աչքերի (բինօկուլյար) կուրություն (H54.0)՝ բացառությամբ բժշկական խորհրդատվության մատուցման դեպքերի.

2. Օրգանական՝ ներառյալ սիմպտոմատիկ, հոգեկան խանգարումներ (F00–F09).

3. Հոգեկան և վարքի խանգարումներ՝ կապված հոգեներգործուն նյութերի օգտագործման հետ (F10- F19)՝ բացառությամբ հոգեկան և վարքային խանգարումների կոֆեինի գործածման արդյունքում (F15) և հոգեկան և վարքային խանգարումների ծխախոտի գործածման հետևանքով (F17).

4. Շիզոֆրենիա, շիզոտիպային և զառանցանքային խանգարումներ (F20 – F29).

5. Տրամադրության (աֆեկտիվ) խանգարումներ (F30-F39)՝ բացառությամբ հիպոմանիայի (F30), երկբևեռ աֆեկտիվ խանգարման, ընթացիկ ռեմիսիայի (F31.7), թեթև աստիճանի դեպրեսիվ էպիզոդի՝ առանց սոմատիկ ախտանիշների (F32.0), հետադարձ դեպրեսիվ խանգարման, ռեմիսիայի ընթացիկ շրջանի (F33.4), ցիկլոթիմիայի (F34.0), դիսթիմիայի (F34.1).

6. Անձի և վարքի խանգարումներ հասուն տարիքում (F60-F69)՝ բացառությամբ կայուն, կոմպենսացված վիճակների.

7. Մտավոր հետամնացություն (F70–F79).

8. Հանտինգտոնի հիվանդություն (G10).

9. Ալցհեյմերի հիվանդություն (G30):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

18.04.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ